

**ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի
(խորհուրդ) արտահերթ նիստի**

Մասնակցում էին՝

- Տ. Խաչատրյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (խորհրդի նախագահ)
Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների
համակարգման գրասենյակի ղեկավար (խորհրդի անդամ)
Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (խորհրդի անդամ)
Բ. Պիպոյան – <<Իրազեկ և պաշտպանված սպառող>> ՀԿ ղեկավար (խորհրդի անդամ)
Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն
(խորհրդի անդամ)
Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի
շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի
փորձագիտական կենտրոնի ղեկավար (խորհրդի անդամ)
Ն. Սարգսյան – <<ՓՄՁ համագործակցության ասոցիացիա>> հկ կառավարման խորհրդի
անդամ (խորհրդի անդամ)
Գ. Ավետիսյան – ՍԱՏՄ ղեկավար
Հ. Ասլանյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների
աշխատանքների համակարգման գրասենյակի փորձագետ
Ա. Ավետիսյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների
աշխատանքների համակարգման գրասենյակի օրենսդրության կատարելագործման
և մեթոդաբանության վարչության վերլուծությունների մշակման բաժնի գլխավոր
մասնագետի պաշտոնակատար
Ա. Բաբայան – <<Ստանդարտների ազգային ինստիտուտ>> ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ
Է. Միրզոյան – ՍԱՏՄ ղեկավարի խորհրդական
Ա. Ղազարյան – ՍԱՏՄ իրավաբանական վարչության պետ
Վ. Հարությունյան – ՍԱՏՄ հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Է. Բասենցյան – ՍԱՏՄ ընդհանուր բաժնի պետ

Բացակայում էին՝

- Ա. Թորոսյան – ՀՀ առողջապահության նախարար
Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Տ. Խաչիկյան – ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ողջունելով ներկաներին՝ կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ էկոնոմիկայի
նախարար Տ. Խաչատրյանը նշեց, որ քվորումն ապահովված է, որից հետո խորհրդի
անդամները միաձայն հաստատեցին նիստի օրակարգը:

Օրակարգային հարցերի քննարկումից առաջ Տ. Խաչատրյանը նշեց, որ տեսչական
մարմնի բնականոն աշխատանքները չխոչընդոտելու նպատակով խորհրդի նիստերն

անցկացվում են օրինակելի կարգի հիման վրա, մինչև ՍԱՏՄ կառավարման խորհրդի աշխատակարգի հաստատումը:

Ա. Ասոյանը նշեց, որ շրջանառվող նախագծով Խորհուրդն է հաստատելու իր աշխատակարգը, որը քննարկման կներկայացվի առաջիկա 1-2 շաբաթվա ընթացքում:

Նախարարն առաջարկեց օրակարգային յուրաքանչյուր հարցին կցել համառոտ տեղեկանք դրա բովանդակության մասին: Այնուհետև Խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը:

1. ««Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

(Է. Միրզոյան, Ա. Ասոյան, Ա. Առաքելյան, Մ. Բեգլարյան, Բ. Պիպոյան, Գ. Ավետիսյան, Տ. Խաչատրյան)

Է. Միրզոյանը ներկայացրեց, որ կարևորելով մարդկանց կյանքի և առողջության պահպանման համար անվտանգ սննդամթերքի նշանակությունը և դրա ապահովման գործընթացը՝ մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Ռիսկի գնահատումն իրականացնող գիտական կազմակերպություն (կենտրոն) նշանակելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

ՀՀ վարչապետի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից ներկայացված եզրակացության համաձայն՝ օրենքով սահմանված չեն գիտական կազմակերպության ընտրության չափանիշները, կազմակերպությանը ներկայացվող պահանջները, ռիսկի գնահատման իրականացման պայմանները: Վարչության կողմից առաջարկվել է կատարել փոփոխություններ «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքում:

Նախարարը խնդրեց պարզաբանել, թե ինչու ռիսկերի գնահատման կենտրոնի նշանակմանը ներկայացվող պահանջները չեն կարգավորվել ենթաօրենսդրական ակտով, այլ առանձնացվել են օրենքների փոփոխությունների փաթեթից և ներկայացվել օրենքում կատարվող փոփոխության տեսքով: Նախարարը խնդրեց ներկայացնել նաև արդարադատության նախարարության կարծիքը կարգի ընդունման մասին և հարցը դիտարկել թե քաղաքականության և թե իրավական հարթություններում:

Ա. Ասոյանը ներկայացրեց երկու դիտարկում՝ 1-ին՝ գործող օրենսդրական կարգավորմամբ՝ նշանակման պարագայում, կա կառավարության հայեցողությունը, իսկ առաջարկվող նախագծով՝ ընտրության պարագայում, կառավարության որոշումով հնարավորություն է տրվում կազմակերպություններին մրցակցային պայմաններում ընտրվել, և 2-րդ՝ տեսչական մարմնի ոլորտային կարգավորման 5 օրենքների փոփոխություններով քաղաքականության և վերահսկողության իրավասությունները տարանջատվում են և այս փոփոխությանը հնարավոր է անդրադառնալ այդ համատեքստում, այսինքն մենք պետք է քննարկենք նշված փոփոխությունը առանձին կամ այդ հինգ օրենքների հետ միաժամանակ հաստատելու նպատակահարմարությունը և առաջնահերթությունը:

Բ. Պիպոյանի կարծիքով, ՀՀ-ում միջազգային չափորոշիչներին համապատասխան ռիսկի գնահատում իրականացնող միակ կենտրոնը ՀՀ ԳԱԱ էկոլոգաանոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնն է, որը ոչ միայն խորհրդատվական է, այլև գիտական, և եթե այդ

կենտրոնը չի նշանակվում, ապա անհրաժեշտ է, որ կառավարությունը սահմանի իրական ռիսկի գնահատման չափորոշիչներ, ընթացակարգեր: Անհրաժեշտ է պարզաբանել, թե կառավարությունը տալիս է չափորոշիչը, թե թողնում է այն խորհրդի տեսքով:

Նախարարը նկատեց, որ արդարադատության նախարարության կարծիքը քաղաքականությանն առնչվող մոտեցում է, սակայն այստեղ կա նաև իրավական հարց:

Գ. Ավետիսյանը պարզաբանեց, որ ի տարբերություն ռիսկի հիման վրա կատարվող ստուգումների, մեզ մոտ այն կատարվում է վտանգից ելնելով: Նախարարի հարցին, թե արդյոք հնարավոր չէ ռիսկերի գնահատումն իրականացնել միջազգային որակավորում ունեցող մասնագետների ներգրավմամբ, ովքեր կմշակեն ռիսկի կառավարման ուղեցույց (խորհրդատվական բնույթի), Գ. Ավետիսյանը պատասխանեց, որ միջազգային փորձագետները չեն կարող բավարարել պահանջները, քանի որ չգիտեն մեր տարածքային առանձնահատկությունները:

Է. Միրզոյանը հավելեց, որ միջազգային կառույցներն են պնդում, որ ռիսկի գնահատումը պետք է իրականացվի տեղական գիտական կենտրոնի կողմից:

Մ. Բեգլարյանը ներկայացրեց, որ ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնը ստեղծվել է 2010թ. վարչապետի որոշումով, ֆինանսավորումը պետական բյուջեից է, առանձին ֆինանսական աղբյուրներ չունի և համագործակցում է ԵՄ լիազոր մարմնի հետ:

Բ. Պիպոյանի նկատեց, որ ռիսկերը պարբերաբար փոխվում են, և միջազգային փորձագետը լավագույն դեպքում կարող է ասել, թե նմուշառման ընտրանքը ճիշտ է արվել, թե ոչ, նա պետք է ներկայացնի սխեման: Կարևոր է նաև այն հարցը, թե խնդիրներ և անհամապատասխանություն ունենալու պարագայում ռիսկերը պարբերաբար վերանայվելու են, թե ոչ: Բ. Պիպոյանի կարծիքով, տվյալների բազայի հավաքագրման և դրա վերլուծության համար փորձագետների այցելությունը, զննումը, խորհրդատվությունն ավելի ծախսատար է, քան տեղի ռեսուրսների օգտագործումը: Նրա կարծիքով, օրենքում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա: Օրենքը լիազորել է կառավարությանը՝ նշանակել գիտական կենտրոն, կառավարությունը կարող է սահմանված կարգով (առանց չափորոշիչի) իրականացնել դա:

Նախարարի դիտարկմամբ, տեսչական մարմինը պետք է ունենա տվյալների բազա, թեկուզ և այն ձևավորված լինի այլ կազմակերպության կողմից: Տվյալների բազայի ձևավորման վրա ծախսվող պետական ռեսուրսի օգտագործման արդյունքում ցանկալի է, որ այն լինի տեսչական մարմնի ներսում:

Ա. Ասոյանը հակադարձեց, որ եթե առանց սահմանված չափորոշիչների կառավարությունը նշանակի որևէ կազմակերպություն, մրցակից կազմակերպությունները կարող են բողոքարկել:

Ա. Առաքելյանի կարծիքով, ավելի նպատակահարմար է տեղի ռեսուրսների օգտագործումը, քանի որ ռիսկերը էվոլյուցիայի են ենթարկվում և հաճախակի փոփոխվում են: Հնարավոր է, որ հետագայում գործեն նաև գիտական այլ կառույցներ՝ նոր կադրերով, նոր պոտենցիալով ու մեթոդներով:

Ամփոփելով քննարկումը՝ նախարարն առաջարկեց հավանություն տալ օրենքի նախագծին, ռիսկերի կառավարման բազան ունենալ տեսչական մարմնում և ընդունել խորհուրդներ, խորհրդատվություն այն կազմակերպություններից, որոնք կունենան դրա տրամադրման իրավասությունը: Նախարարն առաջարկեց հավանություն տալ օրենքի նախագծին,

միաժամանակ, հնարավորինս սեղմ ժամկետում մշակել կառավարության որոշման նախագիծ, որով սահմանվում է նշանակման կարգը:

ՈՐՈՇՈՒՄ - Խորհրդի նիստին մասնակցող անդամների 6 կողմ և 1 դեմ (Բ. Պիպոյան) ձայներով որոշվեց.

- 1) հավանություն տալ օրենքի նախագծին,
- 2) մինչև ԱԺ-ի կողմից օրենքի ընդունումը՝ գործող կարգավորման շրջանակներում մշակել գիտական կենտրոնի նշանակման և դրա չափորոշիչները սահմանելու մասին կառավարության որոշման նախագիծ և ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը: Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ վարչապետի աշխատակազմի իրավաբանական վարչության առարկությունների դեպքում հարցին անդրադառնալ օրենքի ընդունումից հետո:

2. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1679-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

(Է. Միրզոյան, Ա. Ասոյան, Տ. Գաբրիելյան, Ա. Առաքելյան, Բ. Պիպոյան, Գ. Ավետիսյան, Տ. Խաչատրյան)

Ներկայացված նախագծով առաջարկվում է հաստատել նաև անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում ռիսկերի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունները և սահմանված չափանիշների հիման վրա ռիսկի հաշվարկման և գնահատման կարգերը: Մեթոդաբանությունների և սահմանված չափանիշների հիման վրա ռիսկի հաշվարկման և գնահատման կարգերի հաստատման դեպքում հնարավոր կլինի անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում ստուգումները իրականացնել ռիսկի հիման վրա:

Է. Միրզոյանը նշեց, որ նախագծի վերջնական խմբագրումը կատարվել է կառավարման խորհրդի նիստում ստացված առաջարկությունների, փոփոխությունների և լրացումների հիման վրա: Նա ներկայացրեց, որ սա անհատական և ոլորտային ռիսկերի հանրագումարն է և արտացոլված է ըստ տոկոսայնության, նախագծով նախատեսվում է կատարել այն 3 տարին 1 անգամ:

Բ. Պիպոյանը խնդրեց պարզաբանել, թե միջազգային որ չափորոշիչը և որ երկրի փորձն է հաշվի առնվել, և փախտաթղթերի վերջնական տարբերակի վերաբերյալ կան արդյոք միջազգային փորձագետների դրական եզրակացությունները պաշտոնական ձևաչափով:

Ա. Ասոյանը հավելեց, որ նախագծի վերաբերյալ տեղացի կամ միջազգային փորձագետների գրավոր եզրակացության պահանջ սահմանված չէ: Նախագիծը աշխատանքային կարգով բազմիցս քննարկվել է տարբեր փորձագետների, ինչպես նաև շահագրգիռ կողմերի հետ և արժանացել է մասնագետների դրական գնահատականին:

Տ. Գաբրիելյանի հարցին, թե մեծ գլխաքանակները և ծավալներն ինչ հարաբերակցությամբ են ազդում ռիսկայնության գնահատման վրա, Ա. Ասոյանը պարզաբանեց ոլորտային և անհատական ռիսկերի օրինակով, թե ինչպես է համապատասխան միավորների հանրագումարով որոշվելու ռիսկայնության միավորը, որով էլ պայմանավորված է լինելու պլանային ստուգումների հաճախականությունը: Նշվեց, որ այս ամենը ներկայացված է ռիսկի մեթոդաբանության մեջ:

Բ. Պիպոյանն առաջարկեց հաշվի առնել, որ, օրինակ, նոր հիմնադրված արտադրության ռիսկայնությունը բալային համակարգով պետք է գնահատել ավելի ցածր, քանի որ նոր ներդրված համակարգերը, ենթադրվում է, որ ավելի քիչ կունենան խափանման ռիսկայնություն:

Քանի որ համակարգը դինամիկ փոփոխվելու հատկություն ունի, նախարարն առաջարկեց Խորհրդի հավանությանն արժանացնել և հնարավորինս սեղմ ժամկետում կազմակերպել աշխատանքային քննարկում շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ, ամփոփել ստացված կարծիքները և աշխատանքային կարգով ներկայացնել Խորհրդի անդամներին:

Ա. Ասոյանը հավելեց, որ նախագիծը ներառվել է օրակարգում, որպեսզի Խորհուրդը հավանություն տա սկզբունքին և հարցի գաղափարական կողմին, և նշեց, որ նախագիծը դեռևս լրամշակվում է և տեղադրվելու է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական www.e-draft.am կայքում: Նախագծի մշակման ժամանակ հնարավորինս հաշվի են առնված բոլոր կարծիքները: Մեծ իմաստով, այն գործիք է ռիսկի հաշվարկման համար՝ ռեսուրսներն ուղղելու տեսչական մարմնի վերահսկողության առավել ռիսկային ոլորտներ:

Ա. Առաքելյանի կարծիքով՝ հավաքագրվող տվյալների բազան նպատակահարմար է ունենալ մեկ տեղում:

Ամփոփելով քննարկումը՝ նախարարն առաջարկեց ստուգումների արդյունքները ներկայացնել համակարգված՝ աշխատանքային քննարկման արդյունքների հիման վրա ըստ անհրաժեշտության կատարելով փոփոխություններ և լրացումներ:

ՈՐՈՇՈՒՄ - Խորհրդի նիստին մասնակցող անդամների 7 կողմ ձայներով որոշվեց.

- 1) *հավանություն տալ կառավարության որոշման նախագծին՝*
- 2) *ըստ անհրաժեշտության կազմակերպել ևս մեկ աշխատանքային քննարկում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, ամփոփել ստացված կարծիքները և մինչև << կառավարության հաստատմանը ներկայացնել լրամշակել:*

3. 2019 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայությունների 1213 11007 /բյուջե/, 9007 11001 /արտաբյուջե/ և սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տեխնիկական հագեցվածության բարելավում 9007 31001 /արտաբյուջե/ ծրագրերի գնումների պլանում ներհոդվածային փոփոխություն (անվտանգությունը հիմնավորող ուղեկցող փաստաթղթերի, սննդամթերք տեղափոխող տրանսպորտային միջոցների սանիտարական անձնագրերի տպագրություն, նոր կնիքներ և դրոշմակնիքներ պատվիրելու, ինչպես նաև սննդամթերքի լաբորատոր փորձաքննություն իրականացման նպատակներով)

(Գ. Ավետիսյան, Ա. Ասոյան, Բ. Պիպոյան, Տ. Խաչատրյան)

Գ. Ավետիսյանը ներկայացրեց, որ արտաբյուջեի տողում նշված չեն որոշ ծախսեր, հետևաբար, ամեն տարի Խորհրդով պետք է հաստատել որոշ փոփոխություններ, (օրինակ, սերտիֆիկատների տպագրության, կնիքների փոփոխության, լաբորատոր ծառայությունների ձեռքբերման համար միջոցների տրամադրում), որոնց համար պետք է կատարել վերաբաշխում:

Բ. Պիպոյանի հարցին, թե ինչ հիմնավորմամբ է կրճատվել գումարի չափը մեկ այլ ծառայությունից, ինչ հնարավորություն կա նվազեցնելու ծախսերը և արտաբյուջեի

օգտագործման վրա հատուկ ուշադրություն դարձնելու, Գ. Ավետիսյանը պատասխանեց, որ այստեղ կարևորության խնդիր կա:

Ա. Ասոյանն առաջարկեց հաշվի առնել այն հանգամանքը, որ օրենսդրական փոփոխությունների հաստատման դեպքում արտաբյուջե չի լինելու, և հաջորդ տարվա բյուջետային հայտի մեջ ևս անհրաժեշտ է ներառել այս փոփոխությունը:

Հաշվի առնելով ՍԱՏՄ ոլորտի յուրահատկությունը և հնարավոր ֆորս-մաժորային իրավիճակներից զերծ մնալու կարևորությունը՝ առաջարկեց ֆինանսների նախարարության առաջարկության հիման վրա, տարվա ընթացքում, որոշակի գումարի շրջանակում բյուջեի ներտողային փոփոխությունները կատարել առանց խորհրդի նիստ գումարելու: Այսինքն, խորհրդի մեկ որոշմամբ հնարավորություն տալ տեսչական մարմնի ղեկավարին տարվա ընթացքում, որոշակի գումարի շրջանակներում կատարել ներտողային փոփոխություններ:

Նախարարն առաջարկեց սահմանել շեմ (օրինակ՝ 2 միլիոն դրամի չափով):

Բ. Պիպոյանն առաջարկեց մեկ անգամ կատարվող գործարքի համար ընտրել այնպիսի շեմ, որ հետագայում հնարավոր լինի օգտվել 1 անձից գնման ընթացակարգից: Նա առաջարկեց սահմանել առավելագույն 1 մլն դրամի շեմ:

Ամփոփելով քննարկումը՝ նախարարն առաջարկեց ուշադրություն դարձնել այն բանին, որ շեմ սահմանելու արդյունքում կբարելավվի տեսչական մարմնի ծառայությունների որակը:

ՈՐՈՇՈՒՄ - Խորհրդի նիստին մասնակցող անդամների 7 կողմ ձայներով որոշվեց.

1) *հարցին հավանություն տալ,*

2) *սահմանել տարեկան մինչև 2 մլն դրամի շեմ՝ առանց Խորհրդի նիստում քննարկման ներգրտողային փոփոխություններ կատարելու համար:*

4. Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում նախատեսվող ոչ ԵՄ ձևաչափով մոնիթորինգային ծրագրերի համար պահանջվող ֆինանսական միջոցների վերաբերյալ

(Գ. Ավետիսյան, Բ. Պիպոյան, Տ. Խաչատրյան)

Գ. Ավետիսյանը ներկայացրեց ներքին շուկայում վերահսկողության շրջանակներում մշտադիտարկում և լաբորատոր հետազոտություն իրականացնելու համար արտաբյուջեի միջոցներից 23 մլն դրամ գումար հատկացնելու և ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ-ին հատկացնելու նպատակահարմարության հարցը:

Նախարարի հարցին, թե արդյոք նշված գումարը տարեկան սահմանաչափ է, թե ոչ, Գ. Ավետիսյանը պատասխանեց, որ հատկացված 10 մլն դրամին լրացուցիչ նախատեսվում է ավելացնել 23 մլն դրամ: Նախարարին հետաքրքրեց, թե 10 մլն դրամով որքան հետազոտություններ են կատարվել և ինչ խախտումներ են արձանագրվել:

Նախարարը կարևորեց հարցը՝ պարզաբանելով, որ եթե տեսչական մարմնի կողմից իրականացվում են ստուգումներ և հայտնաբերվում անհամապատասխանություններ, ապա կարևոր է դրանց վերացնելուց հետո ուսումնասիրություն կատարել՝ համոզվելու համար, որ տրված ցուցումներն իրոք կատարված են, ինչը զսպող գործիք կլինի նաև մյուս տնտեսվարողների համար: Նա խնդրեց պարզաբանել, թե ինչ հաշվարկներով է ձևավորվել 23 մլն դրամ գումարի չափը:

Գ. Ավետիսյանը պարզաբանեց, որ նշված գումարը ոչ թե կրճատում է այլ ծախսերի հաշվից, այլ հատկացում է արտաբյուջեի՝ համակարգի զարգացման նպատակով ունեցած գումարներից:

Բ. Պիպոյանը նկատեց, որ ստուգումներին ի սկզբանե հատկացված 10մլն դրամը շատ փոքր թիվ է, պետք է հստակեցնել ոչ միայն ավելացվող գումարի չափի հաշվարկը, այլև թե ինչ հիմնավորումներով է այն ուղղվելու ՀԱԲԼԾԿ, ոչ թե տեղեր հայտարարվելու, պետական վերահսկողության շրջանակներում պետության կողմից հավատարմագրված մասնավոր լաբորատորիաները ինչու չեն կարողանում մասնակցել՝ մրցակցային հավասար պայմաններ ապահովելու նպատակով:

Գ. Ավետիսյանը պատասխանեց, որ մասնավոր լաբորատորիաներին վստահված է սահմանային վերահսկողության ժամանակ լաբորատոր փորձաքննություն կատարելը:

Նախարարը նշեց, որ եթե պետական մարմինն ի վերջո անհրաժեշտ է մատուցվող ծառայության արդյունքի ճշգրիտ լինելը, և դա հնարավոր է կազմակերպել գնումների միջոցով և առավել ցածր գնով, ապա անհրաժեշտ է հիմնավորել, թե ինչու են այդ միջոցներն ուղղվում պետական լաբորատորիա, ոչ թե ստեղծվում են հավասար մրցակցային պայմաններ: Եթե մենաշնորհի պիտի լինի, ապա պետք է հիմնավորում լինի, թե ինչու: Միաժամանակ, նախարարն առաջարկեց կողմ քվեարկել հարցին՝ պայմանով, որ ֆինանսատնտեսական կոմիտեի նիստում հարցի քննարկման ժամանակ պետք է ներկայացվի հիմնավորում, թե ինչու է ընտրվել պետական մենաշնորհը: Եվ այստեղ կարևոր է ոչ թե գումարի չափը, այլ հարցի այն կողմը, թե ինչու է այդ գումարն ուղղվում պետական լաբորատորիային:

ՈՐՈՇՈՒՄ - Խորհրդի նիստին մասնակցող անդամների 7 կողմ ձայներով որոշվեց.

- 1) *հարցը հավանության արժանացնել՝ ավելացվող գումարի դիմաց ավելի բարձր որակի արդյունք ստանալու ակնկալիքով,*
- 2) *հանձնարարել ՍԱՏՄ ղեկավար Գ. Ավետիսյանին՝ պատրաստել փաստարկված հիմնավորումներ:*

5. ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի թեկնածության ներկայացում, քննարկում և ընտրություն

(Գ. Ավետիսյան, Ա. Ասոյան, Բ. Պիպոյան, Ն. Սարգսյան, Տ. Խաչատրյան)

Նախարարի առաջարկությամբ որոշվեց լսել թեկնածուին, ով ներկայացրեց ինքնակենսագրական տվյալները՝ նշելով, որ ավարտել է ՀԳԱ անասնաբուժական բժշկագիտության ֆակուլտետը և ստացել անասնաբույժի մասնագիտություն:

Նախարարի հարցին, որ եթե պաշտոնավարման ընթացքում իր գործառույթներն իրականացնելիս առնչվի տեսչական վերահսկողության միջոցով հիվանդությունների կանխարգելմանը, ինչ լծակներ կօգտագործի, Ն. Հայրապետյանը կարևորեց տնտեսվարողների մոտ իրազեկման մակարդակի բարձրացումը և կանխարգելիչ միջոցառումները:

Ն. Սարգսյանին հետաքրքրեց, թե ինչով է զբաղվում այն ընկերությունը, որի փոխտնօրենն է այժմ, և ինչն է ուղղորդել իրեն դեպի պետական կառավարման համակարգ:

Բ. Պիպոյանի հարցը վերաբերում էր նրան, թե ինչպես է գնահատում պետական կառավարման մարմնի՝ բիզնեսի հանդեպ խստությունը՝ ավելի խստապահանջ պետք է լինի, թե ավելի մեղմ: Եվ թե որ ուղղության մեջ է իրեն տեսնում:

Ն. Հայրապետյանը պատասխանեց, որ ինքը կողմ է խստապահանջության մեծացմանը՝ պայմանով, որ ավելացվեն ոչ թե պատժիչ գործոնները, այլ խորհրդատվությունը: Ինքը պատրաստ է վերահսկել մարմնում այն ոլորտը, որն իրեն կվստահվի ղեկավարի կողմից:

Ա. Ասոյանին հետաքրքրեց, թե թեկնածուն որքանով է տեղյակ տեսչական մարմնի կառուցվածքից և ինչ պատկերացում ունի դրա մասին, ռիսկի գնահատում երբևէ կատարել է, թե ոչ, և իր կարծիքով, ինչպես պետք է գնահատվի տեսչական մարմնի աշխատանքը:

Թեկնածուն պատասխանեց, որ ունի կառուցվածքի մասին որոշակի պատկերացում, իր աշխատած մասնավոր ընկերության համար կատարել է ռիսկի գնահատում, իսկ որպես տեսչական մարմնի գնահատականի վրա ազդող գործոններ նշեց տնտեսվարողների արձագանքը և սպառողի գնահատականները:

Գ. Ավետիսյանը նշեց, որ թեկնածուի ընտրվելու և նշանակվելու դեպքում պատրաստվում է նրան վստահել տեսչական մարմնի բյուջետային և ֆինանսական հարցերը:

Ամփոփելով քննարկումը, նախարարը դրական գնահատեց Ն. Հայրապետյանի թեկնածությունը՝ կարևորելով աշխատանքային գործունեությունը մարզում սկսելու հանգամանքը, ինչը խոսում է թեկնածուի անաչառ, բարեխիղճ և ուժեղ անհատականության տեր լինելու մասին: Նախարարի առաջարկությամբ խորհրդի անդամներն անցան քվեարկության:

ՈՐՈՇՈՒՄ - Խորհրդի նիստին մասնակցող անդամների 7 կողմ ձայներով որոշվեց.

- 1) հավանություն տալ Ն. Հայրապետյանի թեկնածությանը՝ ՍԱՏՄ ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակման համար,
- 2) ՍԱՏՄ ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակման համար Ն. Հայրապետյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին:

6. 2020 թվականի բյուջետային հայտ

(Գ. Ավետիսյան, Տ. Խաչատրյան)

Գ. Ավետիսյանը զեկուցեց, որ 2020 թվականի բյուջեի ավելացումը պայմանավորված է ապարատի պահպանման ծախսերի ավելացմամբ և աշխատավարձերի բնականոն աճով, արխիվային ծառայությունների համար նախատեսվող գումարով:

ՈՐՈՇՈՒՄ - Խորհրդի նիստին մասնակցող անդամների 7 կողմ ձայներով որոշվեց.

Հավանություն տալ 2020 թվականի բյուջետային հայտին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ